


ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՐԵՆԵՑ



ԿԵՐՄ ՔԱՂԱՔ Ի ՇԻՐԱԿ.

ԲԱՆԱՍԻԲԱԿԱՆ

ԳԱՅՈՒՄ ԵՐԵՎԱՆԻ ՄԱՆԿԱՆՑ.

(Ա. Ռուբեն Ֆադուրյան)

Գ. 1) Տղայական խաղալիկները ոչ այլ ինչ են, եթէ ոչ ամենակարևոր միջոցք կրթութեան և հնարք և գործեք փեմթելոյ երեխի ընազրծութիւնը, բնաշարժութիւնը (անկախ գործունէութիւնը) և բնակայութիւնը, (ինքնակայութիւն, աներկեան շարժումն) և մատակարարք երեակայութեան նորա՝ ընդարձակութեան և լայնածաւալ տարածութեան:

Խաղերը բնաւ չեն ձևնձրացներ երեխին և եր-

բեք չեն յոկնեցնիր և խռնցեցնիր, եթէ այն խաղերը թողած լինին նոցա աղաս ընտրութեան, ծնողքը կամ սնուցիչքը միայն պարտական են այս ընտրութեան տակ խոհական ուղղութիւն, բայց այնպէս՝ որ երեխայն չիմանայ՝ թէ կայ մէկ այնպիսի ձեռն, որ նրան կառաջնորդէ, երեխայն՝ երկու տարիեկան ժամանակէն սկսած, մինչև շինգ տարեկան ժամանակը խաղալիկ և խաղի վերաց այնպէս կնայի, ինչպէս շափաշատ մարդը իւր բա-

նուգործի կամ իւր ապրուստի ճանապարհի (սարշտայի) վերայ. Եթէ նայիս երեխի երեսին մասղրութեամբ այն միջոցին, երբ նա իւր խաղաղիկը իւր պահուժապատանքը, (ամիկնը, խումանիքը) իւր վէզերը (կոճ, աշուղը,) կարդի զընելցը գասաւորելոյ վրայ լինի զքաղած, խակոյն կհասկանաս որ նա այս գործը կը գործէ՝ ոչ վայրիմիրոյ, ոչ ինչպէս խաղ, այլ որպէս թէ իւր մէկ մէծ և անդառնալի, անչըստեշտ և անսյւլայիկ պաշտօնը կը կատարէ. Ափոսո՞ որ այժմեան նորաշնար խաղաղիկները, որ կարողութիւն ունեցող ծնողք իրանց երեխանց համար կ'գնեն երբեմն թանկ գնով, միշտ չեն յաջողիր երեխանց ճաշակին և բնաւորութեան համեմատ գալ. Ամանը ի ծնողաց գանկատ կանեն՝ թէ իրանց երեխայքը խաղաղիկը կիշացնեն. և կ'կարծեն՝ թէ այս մէկ ախտ է երեխանց վերայ տիրած, և վերայութիւն կըերեն այն, որ նոքա խաղալիկը կը կոտրտեն.

Յիրաւի՞ երեխայն փոքր ինչ զրօսնկով մէկ թանկազին խաղաղիկով՝ խկոյն կջանայ կոտրել, որ նորա կոտրներէն կազմէ մէկ նոր խաղաղիկ որն որ աւելի յարմար կուգայ իւր մոքին և իւր ճաշակին. Եւ այս յայտնի ցցց կուտայ՝ որ խաղալիկի ընտրութիւնը յաջողակ չէ. Նոյնպէս և նկարները և պատկերազարդ զբքերը շատ սակաւ զիսպուածոց մէջ բաւարար կլինին իրանց նշանակեալ նպատակին, Այս նկարները որ նոյա մէջ կդունվին, կամ իւրեանց պարունակած իմաստից անպիտանութեամբ, չնչինութեամբ և զատարկութեամբ կզարդացնեն և կզզուեցնեն երեխին, կամ այնքան գժուարահասկանալի և մանուածոյ են՝ որ բոլորովին անմատչելի կմնան երեխայական հասողութեան, և տղայական դեռ ևս անզօր մըստաց. Անսեթեեթ հասարակ խաղալիկը, որ երեխայն կարող է իւր կամքով տեղէ տեղ փոխել, մէկզմէկէ բաժանել, միասին հաւաքել, իրերաց վերայ դնել, կրկնին ցրուել, տարածել, համրել, նոյանէ իւր ուղեցած ձևերը յօրինել, դասաւորել, կրկնին քանուել, ձեւը փախարիել, աւելի քան զամնայն նորաշնար խաղալիկս կիթթեն և կղարդացնեն նոյա բնապրծութիւնը և մոքի ծընունը, զիւտերը. Ծնողք համարեա՞ թէ ամե-

նայն տեղ շատ սակաւ ուշ կրարձուցանեն երեխանց խաղի և խաղալիկների վերայ, որ լինի այն միտքով՝ թէ նոքա՝ նորա մննդեան և կրմութեան միջոցներ են, և այս պատճառաւ չեն համանգամայն ընտրութիւն առներ նոյա խաղակցաց, որոց չետ նոքա պիտի օր անցուցանեն, Այս ընեկերական խաղակցութիւնը, մանաւանդ ընդարձակ օրոյ մէջ արտաքոյ տան, թէ ի պարտիզի և թէ ի դաշտի, ունի չափազանց կարեւոր աղղիցութիւն երեխի վիզիքական և բարոյական զօրութեան կազմուրման վերայ, որովհետեւ այն է նորա առաջին սկզբնաւորական վարժատունը, ուր կ'սովորին համբերութիւնն, կ'սորվին և կամրիանան նոյա զիմացկոտութիւնը և ժուժկալութիւնը, զիւտեր և հնարագիտութիւններ յառաջ բերելոց շնորհը և անձնածանօթութիւնը. և կ'հեռանայ նոյամէն աւելրոր և անտեղի ամաչկոտութիւնը և զատապարտելի վեհերութութիւնը. այսուղի կպատահին այնպիսի վտանգներ, որ երեխայն պիտի սովորի նոյա աչքի մէջ ուղիղ նայիլ և յաղթել, և աներկիւղ մեալ նոյա կրկնութենէն. կ'հանդիպին զանազան խափանարար արգելքներ, որն որ հարկաւոր կլինի ցրուել և իւր ճանապարհէն և ոտքի տակէն մերժել:

Դ.) Թէ այն վտանգները և թէ այս խոչնդուները թէպէտ և շատ մանր մունր բաներ կլինին, որ քան զնորա մանկական ուժը վեր չլինին, այլ այսու ամենայնիւ նորա ապագայ կինաց համար պիտի զառնան կլինելոց և պատրաստուելոց վարժարան. Այս խաղերի մէջ կսկսն շատ անգամ առաջին ծանօթութիւնները, առաջին բարեկամական կապակցութիւնները, որ երբեմն կը լինին աւելի ամուռ՝ քան զյուտ ժամանակաց ստացած բարեկամութիւնները. Ո՞վ չէ կարող՝ լաւ միտք անելով և իւր երեխայական անցեալ կեանքը և արարմունքը միտք բերելով՝ յիշել և հասկանալ, թէ որքան մէծ աղղիցութիւն են ունեցել իւր վերայ իւր հասակակից ը և իւր երեխայութեան խաղակցք և խաղերը. Գլխաւոր սպայմանը՝ լաւ ընկեր և խաղակից զտնելն է, որ ի հարկէ դիւրին գործ չէ. Որ ժամանակ գտնուեցաւ երեխի համար լաւ. խաղակից, այնուշեաւ բոլորովին պիտի տալ աղատութիւն երեխի մոտաց և հնարագիտութեանց,

Արրեան կողատաշին մանկունք վից ևօթն տարիկան՝ որ խաղաղը սէր և հակամիտութիւն չեն ունենար. այս ոչ այլ ինչ է, եթէ ոչ՝ նոցատան մէջը սնուցած ժամանակի տգետ բանառորական կրթութեան խանգարմոնք, և նոցա երես խայական աշխուժի և ազատութեան խեղդուեց և հեղձամիջուկ լինելց արգասիք, որ երեխին կամ շատ կանուխ կուխին յիմար ճանապարհներով կրթել, կամ նորա խրաքանչեւր քայլը չափազանց ճշգրութեանց և բոլորովին անտեղի և անօգուտ հսկողութեանց ենթարկել, որով լողջուկ երեխայն՝ որ գեռ խր տղայութեան պարտքն չէ հասուցել, աշխոյժն և կայտառութիւնն իւր մէջըն թմրեցրել է և սպանել, և նովաւ դառել է ապուշ կիրօմ:

Ա.) Պէտք է մանկանց այնպէս սնուցանել և կրթել, ինչպէս նախնեաց սովորութիւնն էր, որ անենան առողջ հոգի առողջ մարմին մէջ, և լինին պիտանացու որդիք հայրենեաց ։ Ի՞նչ օգուտ մատղաշ երեխին ծանր ծանր լուծի տակ ձգել, և տարը տանուշինդ տարեկան ժամանակը իմանալ, որ նա քաղցր և բարի պտուղ պիտի լինի ազգի մէջ, և գեռ քսանամեայ հասակը ըստ հասած թաղել։ Աչա մեր դաստիարակութեան մասին երեկասիրող հեղինակաց և լրակացութիւնը. և ծնողը և դաստիարակը ըստ ամենայնի սորա համար պիտի հոգան և ջանք դնեն: Բայց ափսոն և հաղար ափսոս, որ թէ ծնողը և թէ դաստիարակը՝ թէպէտ միշտ կը սեն այս փրկաւէտ պատգամները բայց ո՛չ երրէք կմուճեն այս կանոնը ուսունել կամ ի կիր առնուլ. և երր կհասանի կանոնաւոր ուսումնառութեան ժամանակը, այսուհետեւ կուխին իրանց վլուխը մտածելով պայմուցանել՝ թէ ո՞ն է լաւ, տան մէջը ուսումնառութեան մէջը, թէ վարժատուն տալը: Այլ մէկ կողմէն ինչպէս ծնողը կմուանան իրանք իրանց հարցանել՝ թէ որ կուղենը երեխին վարժատուն տալ, նա տան մէջ այնպան պատրաստուած է, որ կարողանայ վարժարանի ուսումն սկսիլ առնուլ: Միւս կողմէն վարժարանի մեծառորդը և վարժապետը հաղիւ միաբերը կը երեխն՝ թէ պէտք է հոգ տառնի այս պայմանների համար, որոնք որ հարկաւուն աղջիկն աղջիկներու պատրաստուած վարժական առողջութեան, և

փիմթել դպրոցայնել և կազզուրել այնբարի հակամին տութիւնները՝ որն որ նոքա սոտացած ունին արդէն իւրեանց ընտանեկան շրջանի մէջ մատղաշ հասկաւ Սակայն թէ տանը և թէ վարժարանի մէջ աւելի անփոյթ կլինին երեխի ֆիզիքական առողջութիւնը պահպանեց համար, և վարժարանի մէջ կուխին նիստ և ճշշտ պահպանողութիւններ անել, որ երեխայն անընդհատ աշխատի, և չեն հասկանար՝ թէ նա այնքան ուժ չունի բայց լաւ կլինէր՝ որ ծնողը և վարժարանի դաստիարակը առաջ մէկ լաւ միտքերը բերէին՝ թէ ինաց արդէրը արէն է: Մի միայն նա՛ է կարող վայելել կեանք և առողջութիւն, ով որ ունի բաւեկան քանակ մաքուր արեան, և որոյ երակենքի մէջ այն արինը շրջադարձ կանէ կանոնաւոր եղանակաւ Վարժարանը և վարժապետները համարեա՛ թէ սովորաբար ուշ չեն գարձուցաներ այս պայմանի վերայ: Գերմանացի երեկելի բնախուսըն Բոք՝ շատ ճշլիտ կը նկատէ՝ որ վարժարանաց վերատեսուչք, վերակացուք, դաստիարակք, վարժապետք և ուսումնատունք՝ ինչպէս բարձրագյն գրրոցաց մէջ՝ նոյնպէս և սորորադաս ժողովրդական մանկավարժարանաց մէջ, թէ և լաւ զիտեն վարժապետական ուսումն, և կուլ են տուել բոլոր ուսուցչապետական իմաստութիւնը, բայց բնութեան օրինաց՝ որ կը տիրապետէ բավանդակ տիեզերաց, և մասնաւորապէս և առանձին իւրաքանչիւր մարզց մէջ և մանաւանդ՝ մարդկային մարմնոց կազմութեան և կենաց՝ և ո՛չ գուղևաքեաց ինչ գոնէ վայր ի վերց տեղեկութիւն ունին: Նոքա կարհամարհն այս տեղեկութիւնները որպես երկրորդազաս և ո՛չ աւելի կարեօր, և աստի կյառաջանայ այն պակասութիւնը, որ նոքա չեն կարողանար դաստիարակելոց ֆիզիքական և մտաւոր զարգացման համար պարտուապատշաճ հոգ և կանխատեսութիւն ունենալ:

Զ.) Պարտուապատշաճ քանակ մաքուր արեան ունենալը անժիտելի պայման է առաւել մանկական հասակի մէջ ուսումնառութեան, որով չետեւ այս հասակի մէջ զործց կսիտոյանայ արեան մեծագյն մասն, ինչպէս մարմինը սնուցանելց համար, նոյնպէս և ուղեղի մասաւորական աշ-

խատութեան և մկանանց զօրութիւնը փթթեց-
նելց և զարգացնելց և կազդուրելոյ համար։ Այս
իմանալէն յետոյ՝ ինքն ըստ ինքեան քաջայայտ է,
և ամենեցուն ակն յայտնի կերեկի, որ ծնողք պի-
տի հոգան որ մանուկը ունենայ պարտուապատշաճ
քանակաւ մաքուր արիւն, այն երեխին յարմա-
րապէս կերակրելով և պարզ օդի մէջ պահեղով։
Այլ շատ անդամ վարժարանները ևս կմեղանէնն
այս կանոնի զէմ, կամ այնու՝ որ չափազանց մար-
մական և մոտառական աշխատութիւններով
արիւնը աւելի զործածել, մօխել ժախել կուտան,
կամ այնու՝ որ կհարկազրեն երեխերին կուլ
տալ վարժարանական սենեկաց, դասատանց ա-
պականեալ օդը, ուստի կյառաջանայ արեան
ապականութիւն։

Փոքր ինչ խօսինք և աղջկերանց վերայ ի մաս-
նաւորի։

Չատ աղջկունք կան որ մինչդեռ ծնողաց տանն
են՝ առողջ են և փթթեալ վարդի կնմանին, բայց
երբ կը մտնեն վարժատուն և վարժատունէն ուսեալ
կեղանեն, ոմանք աւելի և ոմանք նուազ կիրճն գու-
նավախութիւն։ Չատ աղջկունք ևս կան, որ այս
գունաթափութիւնը արդէն ունին իւրեանց ծնողաց
տանը կամ արդէն պատրաստուած են այն ըն-
դունիլ, և երբ կմտնեն վարժատուն, այն տը-
կարութիւնը կզօրանայ և կաւեղանայ։ Այս մասին
մի օրինակ յանցաւոր կման՝ ինչպէս ծնողք,
նոյնպէս և վարժարանք։ Չատերը այս աղջկերքէն՝
որ իրանց ծնողաց ձեռին դեռ ևս ստացել են այս
արեան ապականութեան և գունաթափութեան
սերմունքը, ուրիշ պատճառ չտնին, բայց միայն՝
կամ մննդաբար կերակրոց պակասութիւն, կամ
անկանոն և չափազանց աշխատութեամբ ծանրա-
բեռնութիւն, (որ կլինի կամ ուսումն առնելու
պատճառաւ մասնաւոր համարների առաւելու-
թեամբ, կամ կանացի և տնական ծառայութեամբ),
կամ ընդհանրապէս ֆիզիքական և մոտաւոր կըր-
թութեանց բռնած ճանապարհի անկանութիւ-
նըն, և կամ կորստաբեր մարմնաշօշափութեան
ստահակութիւն։ Բայց այս դժգունութեան ախտը
իւրեանց հետ ունենալով երբ կմտանէն վարժա-
րան, վարժարանները ևս ձեռնտու կլինին, որ այն
տէարութիւնը արագ արագ և ամենայն զօրու-

թեամբ կաձէ և կիթթի։ և այս կպատահի այն
ժամանակ, երբ աւելի լարել կուտան ուղեղը և
զգայարակը զործունէութեամբ, կամ մկանու-
քը կմտնջեցնեն առաւելագանց պարապմակքը
մարզողական (Ճիմնասթիք) կրթութեանց մէջ, և
զիսաւորաբար երբ յարատե կամ երկարատե կը
պահնեն ապականեալ օդոյ մէջ։ ‘Նոյնպէս և զինի
նախաճաշիկի և ճաշու իսկըյն վարժատուն եր-
թալը և ուսմամբ զըսաղիլը՝ կզօրացնէ արեան
նուազութիւնը, վատթմար ազգեցութիւն անեղով
մարզողական մատակարարութեան վերայ. որով-
հետեւ երբ մարմինը զիսով հանդերձ գէպ ի վայր
յառաջ կցա կթեքի գրելց կամ ընթեռնց հա-
մար, արեան և կերակրոց հիմներու պիտոյքը և
շրջադարձքը նոյնպէս և աղեաց խողովակաց մէջ
շարժումն կրժուարանայ և կիսափանի։ Մտաց
ուժին լարումն, պարտուապատշաճ շարժմանց պա-
կասութիւնն և վարժարանաց դասատանց ապա-
կանեալ օդը, միօրինակ կիսանզարեն՝ թէ ախոր-
ժակը և թէ մարսողութիւնը, և այս ճանապար-
հաւ կյառաջացնեն արեան նուազութիւն։ Այս
տկարութիւնը՝ ուսումնառութեան տարիները շատ
մեծ նշանակութիւն ունի, և սորա հետեւանքը կը
լմնին՝ կարծատեսութիւն, և աչց սրութեան ան-
զօրութիւն, մարմնց իրանի թիւրաթեքութիւն
(թիւնամիջի մկանանց թուլութեան պատճառաւ),
ուղեղի և ներդից ախտակրութիւն (մանաւանդ
վերնոստութիւն), և այս հետեւանքը շատ անդամ
կման նորա վերայ՝ քանի որ կինդանի է։

Ե.) Ուղեղի և մկանանց մէջ արեան պակա-
սութիւնը յառաջ կրերէ զիսացաւ, զիսապտուք,
նոյնպէս՝ ուշանացութիւն, ականջաց մէջ շփոթ
շաշիւն շառաջիւն, սրտի սաստիկ տրուփ, շըն-
չարգիկութիւն, մուտոր և ֆիզիքական քնափու-
թիւն, և յուլութիւն, թախիծ, սրտապակասու-
թիւն, անօրտութիւն, սրտահատութիւն, վհա-
տութիւն և անկամակութիւն կամ կամաց ան-
զօրութիւն։ Պատժիարակք՝ որ չեն հասկանար
արեան նուազութեան հանդամնքը, կամ նորա-
մեն յառաջացած վատթար հետեւանքը շատ ան-
գամ ի զոր և անիրաւաբար պատուհանութիւն
կանեն խղճալի աշակերտին, երբ թէ ծոյլ է և ան-
մտաղիր և անհնաղանդ, և կպահանջնեն այն ան-

զօր և տկար երեխային այնպիսի աշխատութիւններ, բնապէս կատարեալ առողջ աշակերտները կաջնատին, շատ և մեծամեծ վեսաներ կարեն տալ և կուտան իսկ:

Եւ շատ վարժապետներ ևս կան՝ որ կասեն՝ թէ մեր ի՞նչ փոյթն է աշակերտի տկարութիւնը, թող վերակացուք նային, Աերակացուաց ի՞նչ փոյթն է, թէ մէկ քանի աշակերտք զոհ կերթան. զոհ չէի՞ն այն ողորմելքը, որ Աստրախանէն, Մողոգէն, Ղզլարէն, Նոր Նախիջևանէն, Տաւրիդէն, Տիփիւսէն գնացել են և թէպէտ սկսել են լաւ յառաջադիմութիւն անել, բայց այն արեան նուազութեան ախտն ախտանալով, կամ իւրեանց հայրենիքէն արտաքոյ մահու ճարակ լինելով, իւրեանց տարածամ վախճանի համբաւով՝ աղեկէզ են արել իւրեանց ծնողաց, կամ հայրենիք վերադարձել են ախտնանոտութեան ախտիւ իւրեացած. կամ ոսկերացաւ ստանալով այն ժամանակ են վերադարձել, երբ գերեզմանը նոյն համար փորուած պատրաստ է եղել.

Եթէ վարժարանը ունի փափագ, որ ոչ թէ միայն իշխանութեան կամքով չկորուսանէ իւր գոյութեան իրաւունքը, այլև իրաւամբ և արդարութեամբ ստանայ բարի համբաւ՝ իւր մէջն ինամորկական և մարդասիրական կարեկցութիւն պարունակելոյ, որպէս և է իսկ վարժարանաց նպատակն, որ աշակերտելոց համար դառնայ պատրսպարան հրահանգութեան և առողջ զարգացման, և ոչ սպանգարան, պարուաւոր է առաւել ինամք ուննալ նուազարիւն աշակերտաց վերայ, և այնպիսիքը որոշելով՝ նոյն հետ իմաստին կորոշուին և քնափ և յամբառու աշակերտները, որ չեն կարող իւրեանց մոռաւորական աշխատութիւնը այլոց հաւասարել, և չպահանջել՝ որ նոքա միւս աշակերտաց և գասընկերաց հասնելու համար տուժեն իւրեանց առողջութիւնը. Ի՞նչ օգուտ է ուսումնի երբ մանուկը զեռ նորա քաղցրութեան ճաշակը չառած չառած՝ մահուան դառնութեան համը կտեսնէ. Ի՞նչ օգուտ է ուսումնի, երբ մէկ մանկան տարածամ վախճանով գերդաստանի իշխատակը անհետ կիորչի. Ի՞նչ օգուտ այն ուսումնին երբ մէկ վարժապետի կամ վարժարանի անմտադիմնենէն շատ զոհեր կիրթան, զոհեր՝ որ իմէկ

պարտուալատշաճ ուշազրութեան հանդիպէին, պիտի լինէին գերգաստանի կազզուրիչ, հասարակութեան ընտիր և հաւատարիմ անդամ, և հայրենիաց բարի զաւակ, Մանաւանդ՝ որ նուազարիւն նութիւնը արտաքին նշաններով ևս դժուար չէ ճանաչել. նուազարիւն մանկան մարմնոյ մաշկը կլինի զժգոյն, դալկահար դեղնած, բարակ և սառն, և ծիրանի երակներով գծգծած. շրմունքն, մասնաւանդ շրմանց ներսի կողմն, լնտերքը և աչաց թարթիչքը, բիբը, արտևանունքը կլինին գունաթափ, և երիսի կարմրութիւնը այս միջոցին կլինի խարեական նշան, և շատ աղջիկ կայ, որ թէպէտ նուազարիւն է, բայց երեսէն կաթն և արիւն կը կամթի. բանն այն է, որ առողջութիւնը ի ներքուստ իւնզարուած է իսպատ:

Ը.) Արեան մաքրութիւնը շատ անդամ վարժարանի մէջ կենթարկուի մեծամեծ վտանգաց, երբեմն գասատանց օդոյ ապականութեան պատճառաւ, և երբեմն արիւն կազմող, մանաւանդ շնչառութեան և մարսողութեան գործարանաց նեղութեան ներքոյ անկանելց առիթներով։ Պատաստանց և ընդհանրապէս որ և իցէ սենեկաց օդն կապականուի արտաշնչութիւններէն և գողորչելքներէն, և նոցա մէջ երկարատև մնալն կլինի առողջութեան վեսասարեր. Եթէ աշակերտք մէկ գասատան մէջ շատ լինին, մեծ կլինի նոցա արտաշնչութենէն դուրս եկած ածխաթթուի քանակը, որ՝ եթէ օդոյ մէջն լինի աւելի քան զմէկ հարիւրամասն, շնչառութեան համար կլինի շատ վեսասակար, բաց ի ածխաթթուէն՝ արտաշնչեալ օդը կը պարունակէ իւր մէջ և ջրայն շողիք, որ իւրեանց ջերմութեամբ գործակից կլինին այս վեսասարեր կազի շրջագայութեան. Սոցա հետ կմիանան և մարմնոյ վեսասարեր շողիքը (ածխաթթու, ծծլմբախառն ջրածին, ամմնիաք). Լաւ է զիս ևս, որ պատռհանների վերայ, գուռների և երբեմն հասա որմերի պատերի վերայ ևս կլինին շնչելոյզ ծակտիք, որ արտաքին և ներքին օգերը անդադար կամ ստէպ կտեղափոխէին, ներսի ապականեալը արտաքս քարշելով, և դրահ մաքուր և զով օդը ի ներքս ձգելով։ Այսու աղագաւ իւրաքանչիւր բարիսիղ վարժապետ և բարենպատակ դաստիարակ պիտի շատ ճիշդ ուշ զարձուցանեն այն պարա-

գային վերայ, որ զասատան միջի օդը լինի պարզ մաքուր, ոչ ցուրտ և ոչ շնչարգելութեան չափ շոք, Ոմանք սենեկաց ջերմացուցիչ վառելիքը խըսնայելով՝ ամեն ծախտիքը կը խցանեն, չիմանալով որ ոչ թէ միայն արտաքուստ զալց ցրտի առաջը կառնուն, այլ և ներսէն գուրս արտաքսելի օդոյ ապականութեան ձանապարհներն կիցանեն, Ուստի թէ ունենան զրունք և պատուհանք շնչելցը ձախտարակ (վենտելեաթոր), իւրաքանչիւր դասաժամը աւարտելին յիտ օգտաւէտ է աշակերտաց գուրս եղանելն զինի՝ առժամանակ զըսները և պատուհանները բանալ՝ որ օդը սենեկի մէջ խաղայ. և այս առանց նայելց վառելեաց թանկութեան՝ զիշերն ևս կրկնել վեաս չէ. Օգտաւէտ է՝ զասատանց պատուհանների մէջ դնել սաղարթաւոր բջուր և տունկիր, որովհետեւ դաշտարայը արևու ձաճանչից ներքոյ ածխաթթուն կկանէ, և իւր բաղկացուցիչ մասանց և տարերաց վերայ կտարաւուծանէ: Զմեռը՝ երբ երկաթի ատրուշանները կվառեն, ուր ուրեք կան երկաթաշէն ատրուշանք կամ վառարանք կամ հնոցք, նոցա կազերը կարտադրեն վեասարեր ածխաթթու կազ, որովհետեւ հրաշէկ երկաթի մէջն կազերը դիւրաւ թափ կանցանեն և արտաքս գուրս կապրդին: Ի՞նչ ապա ասենք այն վառարանների կամ թռնիրների կամ խարցիների համար, որոց մէջ երեմն ածխաթք կամ հանքային ածուխ կվառեն, և ծուխն՝ սենեկի մէջ կզրօնանու, մինչեւ ծըլսնեցը հասնելը: Ածխաթթու կազը կյառաջացնէ զիւոյ ցաւ, զիւոյ պտոյտ և անգամոց գող:

Թ.) Սրեան ապականութեան կորստական հետեւնը կինի բազում անգամ և այն, որ կապականուին լնարդը և թոքը, նոյնպէս և այլ՝ արեան բաղկացնող և մաքրող գործարանք: Այս տեղաց աւելի կախտակին գործարանները՝ որ մուռորական գործունեութեան կնպաստեն, որ ինքն է՝ ուղեղը և նորա նեարդերը և զգայարանները: Դասատան օդը կարող է ունենալ վեասաբեր աղդեցութիւն աշակերտաց առողջութեան վերաց՝ ինչպէս չափազանց ջերմութեամբ, նոյնպէս և չափազանց ցրտութեամբ: Ընչառեալ օդոյ չափազանց ջերմութիւնը վեաս կուտայ թոքերուն՝ արիւնը դէպ ի թէպ ի թոքը վաղեցնելով. և մանաւանդ

վեասաբեր է աշակերտաց, երբ զասատան ջերմ օդէն՝ յանկարծ դէպ ի զրսի ցուրտ օդը կելանեն, որ կարող է յառաջացնել շնչառական գործեաց բողբոքումն: Իսկ մանկունք ունին սովորութիւն վարժարանէն որ գուրս գան՝ իրանց տուն երթալց վերադարձ ձանապարհին՝ կանչել, ճչել, աղաղակել, գունել, կամ անդագար խօսել միմեանց հետ, Եւ այս պատճառաւ դաստիարակք պիտի լաւ հասկացնէն աշակերտ մանկանց, որ նոքասատիկ ցուրտերուն՝ զգուշանան այդ սովորութիւններէն, և գուրս տեղը՝ ձանապարհին՝ օդը շնչեն և շունչ աւնուն աւելի քննթով, քան թէ բերանով:

Իսկ թէ դասատունը ցուրտ լինի չափազանց, սորա ևս վեասը քան զջերմութիւնը նուաղ չի լինիր. ցուրտը որքան հիւանդութեանց պատճառ կարող է լինիլ, քառապատիկ աւելի վեաս կարող է տալ դասատան մէջ, ուր մանու կը պիտի բացազուխ նստի անշարժ, և ցրտոյ ազգեցութիւնը մարմնէն թափանցելով՝ ոսկերաց համանէ, Թիւրաթէք իրանի վեասը՝ նշնօրինակ երկարաւանութեան կարօտ չէ, որովհետեւ ինքն իրան քաջ յայտնի է և ամենկեան կարող են լաւ հասկանալ:

Բայց այսու ամենայնիւ վարժապետաց համար վեաս կամ շատ աւելի աւելորդ բան չէ հասկանալը, որ ուղեղի չափազանց ուժգին գործունէութիւնը՝ նցնապէս աննշմարելի եղանակաւ, այլ յոյժ արագ քարուքանդ կանէ աշակերտաց առողջութիւնը, ուղեղի նեարդերի ծանրանալով սրտի երակների և նեարդերի և ընդհանուր ներդական զրութեան վերայ, Եւ այս տեղաց առաջացած ախտակրութիւնները, զիւացաւ, զիւապտոյտք, քընէածութիւն, հոսումն արեան ի ունդաց, աւելի այն ժամանակ գուրս կերւեն, քանի որ աւելի լինի զասատան միջի ջերմութիւնը:

Այս ամեն վերը բացատրեալ հանգամանքը կը ըերեն առ այն մակարերութիւն՝ որ դաստիարակաց և վարժապետաց՝ վարժարանի կամ առանձին մանկավարժարանի մէջ՝ ինչպէս շահախնդիր վարձկանաց հոգը միայն այն չպիտի լինի, որ աշակերտաց համարը նային և աւելի կամ պակաս յառաջապիմութեան նշաններ դնեն, նոցա համա-

րատուութեանց համար, և ստէպ ժամացուցին նայեն, և գէպ ի դուակը և դուռը շտապեն. այլ ուսումնատուութեան հետ միասին ճիշդ և մտադիւր ուշադրութիւն ունենան աշակերտեալ մանկանց առողջութեան վերայ, և չորաշանջեն նոցանէն նոցամտաւոր և փիղիքական կարողութենէն վեր մտաւոր գործունէութիւն, որովհետեւ մեր ազգային յառաջադիմութեան համար հարկաւոր են առոցդ և զուարթամիտ բարեկիրթ հայեր, և ոչ անշունչ դիակունք կամ դիակնացեալ շնչաւորք. Հայարնակ գաւառաց գամբարանք լի են կմախովք զոհից, զորս անզմութեամբ և անզիտութեամբ այն տեղերքը շտեմարանել են դարձ գառնութեանց:

Այս ամենը ես քաղելով Հիւսիսափայլէն, Մասիսէն, Արարատեան Արշալուսէն, Համբաւարերէն, Մասեաց Աղաւնիէն, Արարատէն Էջմիածնի, Կոռունէն, Մեղուէն, Հայկական Աշխարհէն և Արևմուտքէն, առայժմ միայն այսքանը որպէս մէկ փոքրիկ փնջակ ծաղկանց կնուիրեմ իմ հայրենակցաց, որ նոքա այս ընթեռնլով՝ ճանաչեն իւրեանց երախտապարտութիւնը այն հանդիսութեանց, և լիարերան հատուցանեն իւրեանց գոհութիւնը նոցա բարեմիտ հեղինակաց:

Հեղինակ Իրաւականութիւններ Դարաշինութեանց և Աշհագնէն Գողտագնէն լոց յԱրշալուսէն Երաշտուան և Աշամունը՝ և Օդունիտ, և Զորից Եղանակաց և Հրաժելունի Աշորդանայ՝ և լոյս ընծայելոց յօրացոյց և յԱրաշտուան Ա. Խջիտագնէն:

ՕԴԻ ՄԸ ՔԲՔՐՈՒՄՆ:

Մեր կեանքը պահպանելու համար հարկաւոր է ոչ միայն սնունդը, այլ կարեւոր է նոյնպէս և օդը: Որչափ բարեհամ ճաշ ևս վայելինք, այնու ամենայնիւ օդուտ չէր լինի մեզ, եթէ մի վայրկեանով անգամ արգելք առաջանար օդի աղատաբար մտնելուն մեր թոքերի մէջ,

Կատերը մինչև անգամ շատ լաւ զիտեն տեսականաբար թէ ինչպէս կարեւոր է օդը և պատրաստ են մտաներով համարել թէ օրը որչափ թթուածին պահանջվումէ հասակաւոր մարդի կանոնաւոր շնչառութեան համար: Բայց գործառնաբար նոքայամախ մոռանումեն հասարակը լինդ համրածանօթ տարբերութիւնը ճառագութ օդի և ցուրտ օդի մէջ: Մեծ մասը զիտէ իհարկէ թէ ինչէնշանակում “զուարթ”, օդի: Զուարթ օդը նա է, որը աւելի ունի թթուածին իւր մէջ: Պարզ ասեմ: շնչառութեան համար մեզ հարկաւոր է ոչ թէ օդը, այլ մեզ հարկաւոր է թթուածինը: Այս խօսքից յետոյ բաւական օտարութիւնի խառնել “զուարթ”, օդը “ցուրտ”, օդի հետ, ոչ ապաքէն թթուածնով հարուստ օդը միենոյն ժամանակ կարօղ է շատ տաք լինել, ինչպէս և միւս կողմից ցուրտ օդը կարօղ է թթուածնով չքառոր լինել:

Լուսաւորվածներից անգամ շատերը դեռ ևս չգիտեն զանազանել և խառնում են այս երկու բոլորովին այլասեռ իրեր: Եթէ խառնօղներն չլինեն, հապա ովլ շնչել կտար մեր բնակարանների մէջ, — և մանաւանդ հիւանդանոցների և սահմանների մէջ, — առանց օդափոխի պատուհաններ, կամ թէ որ բոլորովին միենոյն է, այնպիսի օդափոխներով պատուհաններ, որ երբ դուք կամենում էքնոցանից օդուտ քաղել ձմեռը (տարվան այն եղանակին, երբ նոքա մանաւանդ կարեւոր են դառնում), մաքուր օդի հետներս է մտնում սենեակը զարհուրելի ցուրտը: Ոչ ապաքէն տղեաներն չեն շնչում այս աները, այս հիւանդանոցները, այս ու-